ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Արագածոտնի մարզի Դաշտադեմի Գ. Բաղդասարյանի
անվան միջնակարգ դպրոց «ՊՈԱԿ»
ուսումնական հաստատության անվանումը

7-րդ դասարան
դասարան

Ավետիսյան Մարգարիտ Արսենի
դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2023 - 2024 » ուսումնական տարի

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

VII դասարանում սովորում են 1 աշակերտ 1 աղա:

Դասարանը ակտիվ և համախմբված է: Աշակերտները համերաշխ են: Նրանք օգնում են միմյանց ցանկացած հարցում: Դասարանը ակտիվորեն մասնակցում է համադպրոցական միջոցառումներին, հանրօգուտ աշխատանքներին և շաբաթօրյակներին:

2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուս.տարվա ընթացքում 2023_2024 ուստարվա ընթացքում դասարանի հետ տարվող աշխատանքների նպատակն է բարձրացնել աշակերտների ռազմահայրենասիրական դաստիրակության աստիճանը, նպաստել նրանց մտավոր կարողությունների, գիտելիքների, հմտությունների ձևավորմանը և զարգացմանը: Աշխատեն, որ լինեն ավել իհամերաշխ ու ընկերասեր: ՈՒստարվա ընթացքում անցկացնել զրույցներ, էքսկուրսիաներ, հանրօգուտ աշխատանքներ: Անհատական աշխատանքների միջոցով նպաստել ուսման մեջ թերացող աշակերտների առաջադիմության բարձրացմանը: Անցկացնել դասալսումներ, ծնողական ժողովներ: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 **Հոգևոր դաստիարակություն**: Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

3.2 **Գեղագիտական դաստիարակություն**:

Աշակերտների մեջ ձևավորել գեղագիտություն և ճաշակ: Սովորեցնել նրանց գնահատել արվեստը: Այցելել պատկերասրահներ, մշակութային կոթողներ:

3.3 **Ռազմահայրենասիրական դաստիարակություն** : Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ : Նշել մի շարք ֆիդայիների և հերոսների անունների և թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստի ձևերը:

3.4 **Ֆիզիկական դաստիարակություն**: Դասապրոցեսին պետք է ցուցաբերել ակտիվություն : Բացատրել և պահանջել , որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը:

3.5 **Աշխատանքային դաստիարակություն**: Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը , որ կարողանան գոյատևել ներկայիս դժվար պայմաններում:

3.6 **Բնապահպանական դաստիարակություն**: Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպիբնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ , որոնք առկա են իրենց շրջապատում :

Դասի համարը	Դասի թեման
1.	Նոր ուստարվա անելիքների ծրագրում: Ինչպե՞ս սովորել և աշխատել համավարակի պայմաններում:
2.	Մարմնակրթություն, առողջապահություն: Հիգիենիկ հարցեր:
3.	Հայրենիք, ազգ, մայրենի լեզու:
4.	Անկախության անգնահատելի դերն ինձ համար:
5.	Խաղաղության մշակույթ:
6.	Հանդուրժողականության սահմանում:
7.	Անհանդուրժողականության դրսևորումները
8.	Ներողամտություն,թե վրեժխնդրություն
9.	Աշխարհընկալում: Ես հարգում եմ նաև քո կարծիքը: Փոխըմբռնում:
10.	Հոգու կրթություն և մտքի թռիչք:
11.	Ինչպե՞ս նայել ճշմարտության աչքերին:
12.	Առաջին կիսամյակի ուսումնական արդյունքների վերանայում:
13.	Ամանորյա ջերմ մաղթանքներ և բացիկներ:
14.	Հայրենի՛ք,ես զարկն եմ քո բազկի:
15.	Հայոց բանակ:
16.	Ազնիվ ու անկեղծ հարաբերությունները մեր դասարանում:
17.	Ինչպե՞ս չկորցնել հարազատ մարդկանց վստահությունը:
18.	Ո՞վ է իսկական ընկերը:
19.	Ո՞վ է իմ իդեալը:
20.	Ի՞նչ եմ ուզում դառնալ:
21.	Իմ կարողություններն ու ձեռքբերումները:
22.	Դառն է ճշմարտությունը:
22.	Ինչպե՞ս ապացուցել քո ճշմարտացիությունը:
23.	Ի՞նչ է պատասխանատվության զգացումը:
24.	Ինչպե՞ս պայքարել անտարբերության դեմ:
25.	Ո՞վ է հոգեպես հարուստ իմ կարծիքով:
26.	Սերը որպես տիեզերական զգացմունք:
27.	Վատ սովորույթներ:Ինչպես պայքարել դրանց դեմ:
28.	Իմ կատարած ոչ ճիշտ գործերը:
29.	Իմ կատարած լավ գործերը:
30.	Հիշում ենք և պահանջում:Հույս և հավատ սեփական ուժերի հանդեպ:
31.	Հաղթանակների ամիս մայիս:
32.	Իմ երկիրը երեկ,այսօր,վաղը:
33.	Ոչ ոք չի մոռացվել:

34.	Իմ ձեռքբերումները այս ուսումնական տարում:

I կիսամյակ

Աշխատանքի ուղղվածությունը	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
Աշակերտների մոտ զարգացնել գեղագիտական, ֆիզիկական, աշխատանքային և Ռազմա-հայրենասիրական դաստիարա-կությունը;	Տարվա համար կազմել հերթապահության ցուցակ, որպեսզի դասարանը մաքուր լինի ամբողջ տարվա ընթացքում: Կատարել Սեպտեմբերի 15-ից մինչև 20-ը:	«Իմ քաղաքը» զրույց: Աշակերտները նաև կմասնակցեն համադպրոցական միջոցառմանը նվիրված ուսուցչի տոնին Կատարել 1-ից 5-ը	Էքսկուրսիա Էրեբունի թանգարան (Նոյեմբերի 5-ից 10-ը)	Զրույց, քննարկում երկրաշարժի և բնական այլ աղետների մասին: <<Սպիտակի երկրաշարժ>> Կատարել դեկտեմբերի 5-ից 10-ը

II կիսամյակ

Աշխատանքի ուղղվածությունը	հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս
Սնդիրները՝ Քաղաքացիական պատասխանա-տվության, արժանապատվության նավորում, հարգանք որ երկրի մշակույթի և պատմության ուանդեպ:	«Հայոց բանակի կազմավորումը» զրույց կատարել 15-ից-18-ը	Աշակերտները կմասնակցեն համադպրոցական միջոցառմանը՝ Ս Վարդանանց տոն Տյառնընդառաջ	Զրույց գեղեցկության և բարոյականության վերաբերյալ: Կատարել 7-ից 9-ը	Աշակերտները կմասնակցեն Հայոց ցեղասպանության նվիրված համադպրոցական միջոցառմանը՝ <<Հիշում եմ և պահանջում>>	« Մայիս՝ հաղթանակ ների ամիս» զրույց,քննա րկում	Կիսա յակի ամփո փում

ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂԻ ՀԵՏ

Ծնողական ժողովներ

Անցկացման օրը	Թեման	Քննարկվող հարցերը
Սեպտեմբեր 7	Նոր ուստարվա անելիքների ծրագրում:	Ինչպե՞ս է կազմակերպել դասընթացները համավարակի պայմաններում:
Նոյեմբեր	Աշակերտի առաջադիմությունը և	Հետևողական լինել երեխայի պատրաստվածությանը

	կարգապահությունը	
Հունվար	II կիսամյակի անելիքների ծրագրում:	Ինչպե՞ս միասին կազմակերպել II կիսամյակի անելիքների
Ապրիլ	Աշակերտի առաջադիմությունը և կարգապահությունը	Հետևողական լինել երեխայի պատրաստվածությանը,առաջադիմությանը

ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ

	Ազգանուն, անուն	հասցե
Նախագահ	Տաթև Հակոբյան	Գ.Դաշտադեմ
Անդամներ	Տաթև Հակոբյան	Գ.Դաշտադեմ